ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2023 Թ. ՊԵՏԱԿԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2022

Ուղեցույցի պատասխանատու՝ ՄԻՐՅԱ ՀԱԼԱՋՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի հայոց լեզվի, հայ գրականության ամբիոններին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի ներկա տարբերակում:

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են 2023թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տեսակների համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթուղթը:

Հայոց լեզվի և հայ գրականության շտեմարանները, պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմվում են համաձայն ուղեցույցի:

Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:

ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Միասնական քննության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և պարունակում է 70 առաջադրանք: Ա մակարդակը պարունակում է 45, Բ մակարդակը՝ 25 առաջադրանք: Թեստի ընդհանուր միավորը 80 է. Ա մակարդակինը՝ 50, Բ-ինը՝ 30: Ա մակարդակի առաջադրանքներից հավաքած միավորներով ձևավորվում է ավարտական, Ա և Բ մակարդակներից հավաքած միավորներով՝ միասնական գնահատականը: Ավարտական թեստը պարունակում է միայն Ա մակարդակը: Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ճիշտ պատասխանին՝ առավելագույնը 6 միավոր: Ա և Բ մակարդակներում ընդգրկվելիք առաջադրանքների կառուցվածքային և բովանդակային տեսակների համամասնությունը տրված է համապատասխան աղյուսակում: Թեստային առաջադրանքները կազմվում են հիմնական դպրոցի «Մայրենի» 5-րդ, 6-րդ, «Հայոց լեզու» 7-րդ, 8-րդ, 9-րդ և ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքերի 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարանների դասագրքերում ամփոփված ծրագրային նյութի հիման վրա:

ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԻ ՀԱՄԱՍԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա մակարդակ. 45 առաջադրանք, 50 միավոր				
Բովանդակային բաժիններ	Ընտ-րովի	Կարճ		Ընդ-ամենը
		I տեսակ	II տեսակ	
Հնչյունաբանություն	5	1	1	7
Բառագիտություն	5	1	1	7
Ձևաբանություն	5	2/1	2/1	8
Շարահյուսություն	5	2/1	2/1	8
Կետադրություն	1	0	1	2
Կապակցված խոսք	2/1	0/1		2
Ոճագիտություն	0/1	0/1		1
Ընդհ. գիտելիքներ	0/1	0/1		1
Գրականություն	8	0		8
Ընդամենը	32	12		44
	Պնդումների փունջ			1 (6)

Բ մակարդակ. 25 առաջադրանք, 30 միավոր			
Բովանդակային բաժիններ	Ընտ-րովի	Կարճ	Ընդ-ամենը
		II տեսակ	
Հնչյունաբանություն	3	0	3
Բառագիտություն	4	0	4
Ձևաբանություն	6	1	7
Շարահյուսություն	5	1	6
Կետադրություն	1	0	1
Կապակցված խոսք	0	1	1
Գրականություն	2	0	2
Ընդամենը	21	3	24
	Պնդումների փունջ		1 (6)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Ընտրության պատասխանով առաջադրանքներ

Կառուցվածքը: Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Ներկառուցվածքային տարատեսակները.

ա. Պարզ տիպի: Ձևակերպվում է հարցը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

բ. Համապատասխանեցումով: Տրվում են լեզվական միավորների (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ և այլն) 2 շարքեր և այդ շարքերի միավորների համապատասխանեցումով կազմված պատասխանների տարբերակներ: Պետք է ընտրել պատասխանի այն տարբերակը, որում միավորների համապատասխանեցումը ճիշտ է:

գ. Տրված նյութով: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն, ձևակերպվում է հարցը տվյալ նյութի վերաբերյալ, և տրվում են պատասխանի տարբերակները:

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ձևաթղթում լրացման կարգը: Տրված չորս վանդակներից նրանում, որը համապատասխանում է ընտրված տարբերակի համարին, դրվում է x նշանը:

Միևնույն սյունակում մեկից ավելի նշումների դեպքում տվյալ առաջադրանքի համար միավոր չի տրվում:

2. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն, և տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը՝ մեկ թիվ կամ մի քանի թվեր, պետք է գրել ինքնուրույն:

Ներկառուցվածքային տարատեսակները.

I տեսակ

Միավորների հաշվում: Անհրաժեշտ է հաշվել և գրել պահանջին համապատասխանող միավորների թիվը:

Տրվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է ըստ լեզվական միավորների տիպի՝ հետևյալ կերպ՝

- բառեր, բառակապակցություններ՝ 9,
- բառազույգեր՝ 8,
- նախադասություններ՝ 6:

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է 1

միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ձևաթղթում լրացման կարգը: Տրված վանդակում պետք է գրել համապատասխան թիվը:

II տեսակ Անհրաժեշտ է որոշել պահանջին համապատասխանող միավորների համարները: Տրվող միավորների քանակը չի կարող գերազանցել 8-ը:

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր միավորների համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ: Անհրաժեշտ է տրված համար(ներ)ին համապատասխանող վանդակ(ներ)ում դնել x նշան(ներ)ը:

3. Պնդումների փունջ

Կառուցվածքը: Որևէ թեմայի (լեզվական իրողություն) շուրջ տրվում են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ Ճիշտ է, Սխալ է կամ Չգիտեմ: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Գնահատման չափանիշը: Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված Ճիշտ է կամ Սխալ է պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Չգիտեմ պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված Ճիշտ է կամ Սխալ է պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է, կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

Ձևաթղթում լրացման կարգը: Տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել x նշանը:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ձայնավորների արտասանություն և ուղղագրություն
- Բաղաձայնների ուղղագրություն
- Երկհնչյունների ուղղագրություն
- Կրկնակ բաղաձայնների, և - ի, յ ձայնակապի ուղղագրություն
- Հատուկ անունների ուղղագրություն
- Բառերի բաղադրիչների՝ գծիկով, անջատ, միասին գրություն
- Տառերի թվային արժեք
- Վանկ
- Շեշտ
- Ձայնավորների և երկհնչյունների հնչյունափոխություն

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Բառ, բառիմաստ, բազմիմաստություն, բառագործածություն
- Բառի փոխաբերական իմաստ
- Դարձվածքներ
- Հոմանիշներ
- Հականիշներ
- Համանուններ
- Արմատ և ածանց, նախածանցներ և վերջածանցներ
- Բառերի տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր, բարդածանցավոր
- Կրկնավոր, հարադրական, հոդակապով և անհոդակապ բարդություններ
- Բառապաշարի շերտեր. հնաբանություններ, օտարաբանություններ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Գոյական**. անձնանիշ և իրանիշ գոյականներ, որոշյալ և անորոշ առումներ, գոյականի թիվը, հոգնակիի կազմությունը. անեզական և անհոգնական, հավաքական գոյականներ, հոլովումները՝ ներքին, արտաքին, այլաձև, հոլովները
- **Ածական**. համեմատության աստիճանները
- **Թվական**. տեսակները՝ քանակական, դասական, բաշխական, կոտորակային
- **Դերանուն**. տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական. դրանց քերականական հատկանիշները
- **Հոդեր**

- **Բայ.** կազմությունը՝ պարզ և ածանցավոր, սեռը*[1], դերբայներ և ձևաբայեր, խոնարհման տեսակները (ա, ե), դիմավոր ձևեր (դեմք, թիվ, ժամանակ, եղանակ), խոնարհումը՝ դրական և ժխտական, խոնարհման հարացույցը (պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր), անկանոն և պակասավոր բայեր
- **Մակբայ**. տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի
- **Կապ**. նախադրություններ, հետադրություններ, կապերի հոլովառությունը
- **Շաղկապ**. տեսակները՝ համադասական և ստորադասական, մենադիր, կրկնադիր և զուգադիր
- **Ձայնարկություն**
- **Վերաբերական**. հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, սահմանափակման տեսակների տարբերակումը

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

- Բառակապակցություն
- Կապակցության միջոցներ և եղանակներ. շարադասություն, խնդրառություն, համաձայնություն
- Նախադասություն. կառուցվածքային տեսակները՝ երկկազմ և միակազմ, համառոտ և ընդարձակ, թերի և լիակազմ
- Ենթակա. արտահայտությունը
- Ստորոգյալ. տեսակները՝ պարզ և բաղադրյալ. դրանց արտահայտությունը
- Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը
- Որոշիչ. արտահայտությունը
- Հատկացուցիչ. արտահայտությունը
- Բացահայտիչ. տեսակները՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական
- Խնդիրներ. տեսակները՝ ուղիղ, ներգործող, անջատման, հանգման, միջոցի, վերաբերության. դրանց արտահայտությունը
- Պարագաներ. տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի, պատճառի, պայմանի, նպատակի, հիմունքի և զիջման. դրանց արտահայտությունը
- Դերբայական դարձված*
- Բարդ նախադասություն. տեսակները՝ համադասական և ստորադասական
- Գերադաս և ստորադաս նախադասություններ, դրանց շարադասությունը, կապակցումը
- Ստորադաս նախադասության բնույթը (պաշտոնը)*
- Բարդ նախադասության գծապատկեր*

---

[1] Աստղանիշով նշված թեմաներից կարող են լինել միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

- Փոխակերպում*. պարզ (դերբայական դարձվածով) և բարդ նախադասությունների, ուղղակի և անուղղակի խոսքի
- Կետադրություն

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Պատկերավորման-արտահայտչական միջոցներ՝ մակդիր, համեմատություն, անձնավորում, փոխաբերություն, չափազանցություն, բաղաձայնույթ, շրջադասություն, հակադրություն
- Գործառական ոճեր՝ առօրյա-խոսակցական, գիտական, վարչական, գեղարվեստական, հրապարակախոսական

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

- Պարբերությունների, նախադասությունների կամ նախադասության հատվածների հաջորդականություն
- Տեքստին իմաստով հակասող (չհակասող), իմաստից բխող (չբխող) մտքի ճանաչում
- Նախադասության կամ տեքստի քերականական, տրամաբանական և ոճական շարունակության ճանաչում
- Նախադասության կամ տեքստի հիմնական միտքը կրող բառերի և արտահայտությունների տարբերակում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

- Հայերենի զարգացման փուլերը, արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային և քերականական տարբերությունները
- Բառարանների տեսակները

Առաջադրանքներում չեն ընդգրկվի՝

Ուղղագրությունից և ուղղախոսությունից՝

1. ուղղագրական զուգաձևությունները
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը
3. օտար ծագմամբ բառերի շեշտադրությունը ուղիղ ձևերում
4. տողադարձը
5. բառերի այբբենական դասավորությունը
6. բաց և փակ վանկերի ճանաչումը

Բառագիտությունից՝

1. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումը
2. համահունչ համանունները
3. խոսակցական, հազվադեպ գործածվող, հնացած, դիպվածային, կեղծ գրական բառերը, հասարակաբանությունները
4. քարացած ածանցները
5. իսկական և կցական բարդությունների տարբերակումը
6. համառոտագրությունը
7. հապավումները

Ձևաբանությունից՝

1. սեռական հոլովը տրականից (բացի դերանվանական հոլովումից) և հայցականը ուղղականից և տրականից տարբերակելը
2. որակական և հարաբերական ածականների տարբերակումը
3. ժամանակաձևերի ոճական կիրառությունները
4. արգելական հրամայականի զուգաձևությունները
5. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը
6. ձայնարկության տեսակները
7. վերաբերականների՝ ցանկում չնշված տեսակները

Շարահյուսությունից՝

1. հրամայական նախադասության արտահայտության ձևերը՝ բացի հրամայական եղանակով կազմվածներից և անդեմ նախադասություններից
2. հավաստիական հարցական և հորդորական հարցական նախադասությունները
3. առդրությունը
4. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը
5. սեռականով որոշչի և դերանվան որոշչի իմացությունը
6. բազմակի ստորոգյալը և միավորյալ նախադասությունը
7. մասնական ուղիղ խնդիրը
8. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից
9. համադասական նախադասության տեսակները
10. կետադրական զուգաձևությունները

Ոճագիտությունից ու կապակցված խոսքից՝

1. իրադրական, անհատական և հեղինակային ոճերը
2. գործառական ոճերի ենթատեսակները
3. շարադրանքի (տեքստի) տեսակները և կառուցվածքը
4. տեղեկատվական ժանրերը
5. գործնական գրությունները
6. լրատվական ժանրերը

Ընդհանուր գիտելիքներից՝

1. գրաբարի, միջին հայերենի, բարբառների քերականական առանձնահատկությունները
2. աշխարհաբարի ենթաշրջանները

Քննական թեստերում չեն ընդգրկվի հետևյալ պահանջներով առաջադրանքներ՝

1. Ո՞ր նախադասության մեջ / տրված նախադասության մեջ / տեքստում քանի՞ հնչյունափոխված բառ կա:
2. Հոմանիշների քանի՞ զույգ/եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ընթերցանության, անգիր սովորելու և ընդհանուր իմացության համար

Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն»-ից Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Վահագնի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի մասին, «Ողբ», Գիրք երրորդ, գլուխ ԽԷ. «Երանելի Մեսրոպի մասին», գլուխ ԾԲ. «Դանիելյան նշանագրերի մասին», գլուխ ԾԳ. «Մեսրոպյան նշանագրերի մասին, որ տրվեցին երկնային շնորհով», «Վահագնի ծնունդը», «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշես», «Հեծաւ արի արքայն»

Կորյուն. «Վարք Մաշտոցի»*[2], **Ագաթանգեղոս*, Փավստոս Բուզանդ*, Եղիշե*, Ղազար Փարպեցի***

«Սասնա ծռեր». համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով

Գրիգոր Նարեկացի. «Տաղ Վարդավառի», «Մեղեդի ծննդյան», «Մատյան ողբերգության»

Մխիթար Գոշ. «Արջ և մրջյուն», «Բամբակենին և Սոսին», «Աստղերը և Լուսինը», «Ոսկին և Ցորենը», «Դատաստանագիրք»*

Վարդան Այգեկցի. «Իմաստուն զինվոր», «Իշխան և այրի կին», «Եզը և ձին»

Նահապետ Քուչակ. «Ժամ-ժամ զիմ ղարիպութինս», «Քանի՞ ու քանի՞ ասեմ, զիմ եարին…», «Երբ սէրն ի յաշխարհ եկաւ», ***անգիր***՝ «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»

Սայաթ-Նովա. «Դուն էն գլխեն իմաստուն իս», «Աշխարումս ախ չիմ քաշի», «Թամամ աշխար պտուտ էկա», «Աշխարս մե փանջարա է»

Խ. Աբովյան. «Վերք Հայաստանի».(«Հառաջաբանը»), «Պարապ վախտի խաղալիք»*, «Նախաշավիղ կրթության»*

Մ. Նալբանդյան. «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր», «Երկու տող»*, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»*, «Կրիտիկա»*,
անգիր՝«Ազատություն», «Իտալացի աղջկա երգը» (առաջին 8 քառատողը)

---

[2] Աստղանիշով տրվածները ընդհանուր իմացության համար են:

Պ. Դուրյան. «Սիրել», «Տրտունջք»
անգիր՝ «Լճակ», «Իմ ցավը»

Ռաֆֆի - «Սամվել»

Հ. Պարոնյան. «Մեծապատիվ մուրացկանները», «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ»*, «Ազգային ջոջեր»*, «Պաղտասար աղբար»*

Մուրացան. «Գևորգ Մարզպետունի», «Խորհրդավոր միանձնուհի»*, «Նոյի ագռավը»*, «Առաքյալը»*

Շիրվանզադե. «Քառս», «Արտիստը»

Նար-Դոս. «Ես և նա», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը» պատմվածաշարը,* «Սպանված աղավնին»*

Գ. Զոհրապ. «Այինկա», «Զաբուղոն», «Փոստալ», «Այրին», «Ճիտին պարտքը

Հ. Թումանյան. «Հայրենիքիս հետ», «Անուշ», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Գիքորը», «Քաջ Նազար», «Հոգեհանգիստ»*, «Հայոց վիշտը»*
անգիր՝«Անուշ» (նախերգանք), «Թմկաբերդի առումը» (նախերգանք), «Փարվանա» («Էսպես անցան շատ տարիներ» տողից մինչև վերջ), «Հայոց լեռներում», քառյակներից՝ «Տիեզերքում աստվածային», «Կյանքս արի հրապարակ», «Իմ կնունքին», «Բերանն արնոտ մարդակերը էն անբան», «Աշնան ամպին ու զամպին», «Ամեն մի սիրտ», «Հե՞յ ագահ մարդ», «Հին աշխարհքը ամեն օր», «Հիմի բացել են հանդես», «Լիներ հեռու մի անկյուն», «Ինչքան ցավ եմ տեսել ես», «Երկու շիրիմ իրար կից»

Ա. Իսահակյան. «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Հավերժական սերը», «Աբու-Լալա Մահարի», «Սաադիի վերջին գարունը», **անգիր**՝ «Ռավեննայում», «Մի մրահոն աղջիկ տեսա»

Դ. Վարուժան. «Հարճը»,
անգիր՝«Ձոն»

Լ. Շանթ. «Հին աստվածներ»

Մ. Մեծարենց. «Արևին»,
անգիր՝«Սիրերգ» («Գիշերն անույշ է»), «Վայրկյան», «Աքասիաներու շուքին տակ»

Վ. Տերյան. «Աշնան մեղեդի», «Ոսկեհանդերձ եկար», «Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Կարուսել», «Հրաժեշտի գազել», «Որպես Լաերտի որդին», «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին», «Աշնան երգ»*, «Գարնանամուտ»*
անգիր՝«Տխրություն», «Fatum», «Գարուն», «Մի՞թե վերջին պոետն եմ ես», «Կարծես թե դարձել եմ ես տուն»

Ե. Չարենց. «Տաղարան» շարքը, «Անվերնագիր»(«Իմ մահվան օրը…»), «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Մահվան տեսիլ»(«Որպես լքված…»), «Դանթեական առաս-պել», «Գանգրահեր տղան»,
անգիր՝«Վահագն», «Ես իմ անուշ Հայաստանի», «Տաղ անձնական»

Դ. Դեմիրճյան. «Վարդանանք»

Ա. Բակունց. «Մթնաձոր», «Խոնարհ աղջիկը», «Միրհավ», «Ալպիական մանուշակ», «Սպիտակ ձին»

Հ. Շիրազ. «Մայրս», «Մայրս փոքրիկ», «Թագադրում»,
անգիր՝ «Գարնանամուտ», «Էքսպրոմտ»

Հ. Սահյան. «Քարափը», «Մասրենի», «Անունդ տալիս»,
անգիր՝«Անտառում», «Օրը մթնեց…»

Պ. Սևակ . «Անլռելի զանգակատուն», «Վարք մեծաց», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»

Հ. Մաթևոսյան. «Աշնան արև», «Կանաչ դաշտը»

Վ. Սարոյան. «Իմ սիրտը լեռներում է»(հիմնական դպրոցի դասագրքի հատվածները)

Հանձնարարվող գրականություն

1. Հանրակրթական դպրոցի 5-12-րդ դասարանների հայոց լեզվի և հայ գրականության դասագրքեր:
2. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976[3]:
3. Փ. Մեյթիխանյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Եր., 2013:
4. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան. Հոմանիշների առձեռն բառարան, Եր., 2020:
5. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:
6. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան. Դարձվածքների, համանունների, հապավումների բառարան, Եր., 2020:

[3] Նշված բառարանը նկատի է առնվում միայն բառագիտության առաջադրանքներ կազմելիս և այս ոլորտում համարվում է առաջնային նշանակության:

2023թ. միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ
Հայոց լեզու և հայ գրականություն

ԳԹԿ անձնական համար

ազգանուն

անուն հայրանուն

Եղե՛ք ուշադիր

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնջերում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 1 Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1																					1
2																					2
3																					3
4																					4

	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	
1													1
2													2
3													3
4													4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8
33								
34								
35								

Կարճ պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8
36								
37								
38								

39		42	
40		43	
41		44	

Պնդումների փունջ

45

Պնդումների փունջ	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

Բ մակարդակ Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	
1																						1
2																						2
3																						3
4																						4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8
67								
68								
69								

Պնդումների փունջ

70

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի		Պնդումների փունջ
1	1	Ճիշտ է
2	2	Սխալ է
3	3	Չգիտեմ
4	4	

Կարճ

	1	2	3	4	5	6	7	8

Լրացրեք այս նախադասությունը՝

Ծանոթ եմ՝ քննության կարգին: